# ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ
# ՕՐՀՆՅԱԼ Է ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ

ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 31 - 32 (16732) ՇԱԲԱԹ 20 ԱՊՐԻԼԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԱՊՐԻԼԻ 14-Ը՝ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՔԱՅԼԵՐԸ ՊԵՏՔ Է ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՆ ԷԼ ԿԱՏԱՐԵՆ. ԴՈՒՔ ԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՔԱՅԼԸ»

### ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ



*Ապրիլի 13-15-ը Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին գտնվում էր Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում:*

*Իր տարածաշրջանային այցը Վրաստանի նախագահն սկսեց Ախալցիխեից, որտեղ ապրիլի 13-ին հանդիպում ունեցավ երկրամասի, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման ղեկավարների հետ:*

Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանի աջակցությամբ, նկարիչ Մուսիա Քեբուրիանու կողմից վրաց այբուբենով նկարազարդված Ախալքալաքի մշակույթի տան պատի բացմանը:

Ախալքալաքի մշակույթի տանը կայացած հանդիպմանը, դիմելով հավաքվածներին, Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարեց, որ լեզուն հարաբերություններում, մշակույթում, պետության ամրապնդման գլխավոր դուռն է: Լեզուն ամեն ինչի սկիզբն է:

Այցի շրջանակներում, ապրիլի 14-ին Վրաստանի նախագահը Վրաց լեզվի օրվա առիթով մասնակցեց, Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի նախաձեռնությամբ եւ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՇԱԲԱԹՎԱ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

*Ապրիլի 14-ին Վրաստանը նշեց Վրաց լեզվի օրը: Տոնի առիթով, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, երկրի օրենսդիր եւ գործադիր մարմինների ներկայացուցիչները ծաղիկներով զարդարեցին Թբիլիսիի Նոդար Դումբաձեի անվան այգում տեղադրված «Դեդա էնայի» հուշակոթողը, ապա Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանում մասնակցեցին վրաց լեզվին նվիրված շաբաթվա բացման արարողությանը: Հրավիրվածների թվում էր նաեւ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:*



Իր խոսքում Մամուկա Բախտաձեն նշեց.

- Մեր բազմադարյա պատմությունը ազատության համար պայքարի պատմություն է: Ինձ համար 1978 թվականի ապրիլի 14-ը հենց այդ տարեթիվն է, երբ վրաց ազգը ցուցադրել է համախմբվածություն՝ պաշտպանելու մեր ինքնահաստատումը, քանի որ մեր լեզուն վրաց ինքնահաստատման եւ նույնականացման անբաժան մասն է:

Ավելացնենք, որ Վրաց լեզվին՝ մայրենիին, նվիրված տոնը սահմանվեց 1990 թվականին, ի նշանավորում 1978 թվականի ապրիլի 14-ի իրադարձությունների, երբ Թբիլիսիում պետական լեզվի կարգավիճակով վրաց լեզվի պաշտպանության համար անցկացվեց բազմահազարանոց հանրահավաք, ինչն էլ խորհրդային իշխանություններին ստիպեց չեղարկել Խորհրդային Վրաստանի սահմանադրության մեջ լեզվի մասին հոդվածը:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԾՈՒՄ

*«Վրացական երազանք» կուսակցության կենտրոնակայանում, կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլու նախագահությամբ անցկացված հանդիպմանը, խորհրդարանական մեծամասնությունը կուսակցության ղեկավարության հետ համաձայնեցրեց իր դիրքորոշումը Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականների հարցում:*

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, «Վրացական երազանք» խորհրդարանական մեծամասնության կողմից «Ընդհանուր դատարանների մասին» օրինագծում մտցվել են ուղղումներ:

Մասնավորապես, օրինագծին ավելացել է հոդ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇՈՒՄ Է ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ՏՈՆԸ



*Կիրակի օրը՝ ապրիլի 21-ին, ժամը 11:00-ին, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի բոլոր գործող տաճարներում կմատուցվի Սուրբ եւ Անմահ պատարագ՝ նվիրված Հիսուս Քրիստոսի Հարության Հրաշափառ տոնին:*

*Հաջորդ օրը՝ ապրիլի 22-ին, ննջեցյալների հիշատակի օրն է:*

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ «ԱՇՆԱՆԱՅԻՆ ԻՐԻԿՆԱՄՈՒՏ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Ապրիլի 16-ին Երեւանի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի դերասանները բեմադրեցին «Աշնանային իրիկնամուտ» ներկայացումը:*



Ներկա էին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ դստեր հետ, վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետյանը, Հայաստանի մշակույթի նախարարի պաշտոնակատար Նազենի Ղարիբյանը, Ազգային ժողովի պատգամավորներ Նարինե Թուխիկյանը, Շիրակ Թորոսյանը, Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն՝ տիկնոջ՝ Էկատերինե Բաքրաձեի հետ, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, պաշտոնական այլ անձինք:

Երեւանի Մայր թատրոնի բեմին

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԿԱՐԵՎՈՐ ՔԱՅԼ՝ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

*Ապրիլի 12-ին վրաց երիտասարդ գրողները հյուրընկալվեցին Հայաստանի գրողների միությունում: Այնտեղ կազմակերպված հանդիպման ժամանակ, վրաց եւ հայ գրողները եւս մեկ կարեւոր քայլ կատարեցին գրական կապերը զարգացնելու գործում:*



- Վրաստանի հետ գրական առնչությունը մենք վառ ենք պահում: Ամեն տարի մշտական հանդիպումներ ունենք Վրաստանում եւ Հայաստանում: Սայաթ-Նովայի օրերն ամեն տարի գրական մեծ տոնի են վերածվում Թբիլիսիում: Նոր հրատարակած գրքերի շնորհանդեսներ են տեղի ունենում Երեւանում, Թբիլիսիում եւ այլ քաղաքներում: Մեր երիտասարդ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

# ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ԱՅՍ ՓՈՒԼՈՒՄ ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ»

Ապրիլի 19-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն կառավարության նիստին նախորդած ավանդական հարցազրույցում, պատասխանելով լրագրողի հարցին, ունե՞ր արդյոք նա անհամաձայնություն Գիորգի Քոբուլիայի հետ, եւ նախատեսվո՞ւմ են, թե՞ ոչ կադրային փոփոխություններ, հայտարարեց, որ մեզ անհրաժեշտ են արագ եւ օպերատիվ որոշումներ, սա միանշանակ է:

- Ես բազմիցս ասել եմ եւ մեկ անգամ եւս կկրկնեմ, 2019-2020 թվականներին մեր բյուջեն կկազմի մոտ 27 միլիարդ լարի: Իհարկե, ակնկալիք չունեմ, որ բավական ռեսուրսներ կան բոլոր մարտահրավերները հաղթահարելու համար, սակայն սա շատ կարեւոր ռեսուրս է նրա համար, որ մեր հասարակության կյանքը եւ խնդիրները, որոնք գոյություն ունեն, թեթեւացնենք,- հայտարարեց վարչապետը:

Դրա հետ մեկտեղ, նրա գնահատմամբ, այս գումարը եւ ներդրումներն անհրաժեշտ են շատ օպերատիվ եւ արդյունավետ կերպով կառավարելու համար:

Նրա խոսքով, այս փուլում, կադրային փոփոխություններ չեն նախատեսվում, սակայն որոշումը չի ուշանա, եթե որեւէ նախարար հետ մնա անհրաժեշտ տեմպից:



# ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

***Ապրիլի 18-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն բավարարեց էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարի պաշտոնից Գիորգի Քոբուլիայի պաշտոնաթողության դիմումը:***

Վարչապետի համապատասխան կարգադրությամբ, Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարի պաշտոնում է նշանակվել Նաթիա Թուրնավան, ով մինչ այդ էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարի տեղակալն էր:

1985 թվականին, միջնակարգն ավարտելուց հետո, Նաթիա Թուրնավան ուսումը շարունակել է Իվանե Ջավախիշվիլու պետական համալսարանում, ավարտել նույն համալսարանի ասպիրանտուրան, պաշտպանել է ատենախոսություն, ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Ապա ավարտել է Միացյալ Թագավորության Քեմբրիջի համալսարանը, ստացել բիզնես-վարչարարության մագիստրոսի աստիճան: 1994 թվականին՝ որպես տնտեսական հարցերով խորհրդատու, աշխատել է Վրաստանի կառավարության գրասենյակում, եղել է Թբիլիսիի սակրեբուլոյի անդամ, Վրաստանի նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ, «Գործընկերային հիմնադրամի» գործադիր փոխտնօրեն:

Հիշեցնենք, որ Գիորգի Քոբուլիան Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար էր նշանակվել 2018 թվականի հուլիսին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՌՈՒՄԻՆԻԱ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱ

***Ապրիլի 14-16-ը Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն պաշտոնական այցով գտնվում էր Ռումինիայում եւ Բուլղարիայում:***



Ռումինիայում Վրաստանի կառավարության ղեկավարը հանդիպումներ ունեցավ երկրի նախագահ Կլաուս Յոհանի, վարչապետ Վասիլիկա Վյորկանի հետ:

Բանակցությունների արդյունքներով, ձեւակերպվեց երկու երկրների միջեւ մշակութային ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր, որն ստորագրեցին Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին եւ Ռումինիայի մշակույթի ու ազգային նույնականացման նախարար Վալերի Դանիել Բրեազը:

Ռումինիայում, այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը՝ պատվիրակության անդամների հետ, այցելեց Անթիմոզ Իվերիելու անվան տաճար եւ ծաղկեպսակ դրեց Ռումինիայի անկախության համար զոհված մարտիկների հուշահամալիրին:

Բուլղարիայում, պաշտոնական այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ երկրի նախագահ Ռումեն Ռադեւի, կառավարության ղեկավար Բոյկո Բորիսովի հետ:

Արեւելաեվրոպական վերոնշյալ երկրներ կատարած այցի ընթացքում, Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի անդամներ Ռումինիան եւ Բուլղարիան իրենց պատրաստակամությունը հայտնեցին աջակցել Վրաստանին Եվամիության եւ Հյուսիսանտլանտյան ալյանսին ինտեգրվելու հարցում:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ «ԱՇՆԱՆԱՅԻՆ ԻՐԻԿՆԱՄՈՒՏ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵՑ ԵՐԵՎԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)





մեծ հաջողությամբ ներկայացված «Աշնանային իրիկնամուտ» ներկայացումը ջերմ ընդունելության արժանացավ հանդիսատեսի կողմից: Ներկաներն ըստ արժանվույն գնահատեցին 23 տարվա վաղեմություն ունեցող բեմադրության՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի նոր մեկնաբանությունը, ներկայացման նկարչական ձեւավորող Մայիս Մխիթարյանի դեբյուտը, երիտասարդ դերասանների ոգեշունչ խաղը...

Եվ պատահական չէին Հայաստանի անվանի եւ հանրահայտ արվեստագետներ Հակոբ Ղազանչյանի, Ռուբեն Բաբայանի, Կարինե Խոդիկյանի, Սոնա Մելոյանի, երիտասարդ բեմադրիչներ Սուրեն Շահվերդյանի եւ Անի Գեւորգյանի դրվատանքի խոսքերը՝ ռեժիսորի, նկարչի, դերակատարների՝ շնորհաշատ դերասաններ Սոֆյա Ներսիսյանի (Աշխեն), Գլորիա Գեւորգյանի (Բավական), Նանո Պողոսյանի (Սիրան), Դավիթ Բարսեղյանի (Գիքո), Նարեկ Բայանդուրյանի (Արշակ), Սերգեյ Սաֆարյանի (Դերասան) եւ այլոց հասցեին:

Ադամյանցիների «Աշնանային իրիկնամուտ» ներկայացման թբիլիսյան հաղթարշավը շարունակվեց Երեւանում:

# ԿԱՐԵՎՈՐ ՔԱՅԼ՝ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գրողների հունիսյան խորհրդակցությանը եւս մշտապես հրավիրում ենք վրաց երիտասարդ գրողների,- ասաց Հայաստանի գրողների միության նախագահ Էդուարդ Միլիտոնյանը:

Նրա խոսքով, բազմաթիվ են նաեւ այն գրքերը, որոնք փոխադարձաբար հրատարակվում են երկու երկրներում: Միլիտոնյանը վստահեցրեց, որ Վրաստանի գրողների հետ իրենց կապերը սերտ են ու բարեկամական: Նրանք եւս հայ գրականության հանրահռչակման գործում իրենց մեծ դերն ունեն:

Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն նշեց, որ ամեն օր զգում են հայ ժողովրդի սերն իրենց ժողովրդի նկատմամբ:

- Հույս ունենք, որ այսօրվա միջոցառումը մեկ կարեւորագույն քայլ է մեր հարաբերությունների զարգացման գործում,- ասաց դեսպանն ու նշեց, որ թեեւ իրենց երկիրը փոքր է, սակայն գրականության հարցում կարող է մրցակից լինել շատ այլ ազգերի:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, ապրիլի 21-ին Ուկրաինայում կանցկացվի նախագահական ընտրությունների երկրորդ փուլը:*

*Սոցիոլոգիական հարցման արդյունքներով, Ուկրաինայի նախագահի թեկնածու Վլադիմիր Զելենսկին, ընտրությունների երկրորդ փուլից առաջ ժողովրդականության վարկանիշներով, 47 տոկոսով գերազանցում է պետության գործող ղեկավար Պյոտր Պորոշենկոյին:*

*Հետազոտության արդյունքների համաձայն, Զելենսկու օգտին պատրաստ է քվեարկել Ուկրաինայի հարցված այն քաղաքացիների 72,2 տոկոսը, ով կողմնորոշվել է իր թեկնածուի հարցում եւ մասնակցելու է քվեարկությանը, իսկ Պորոշենկոյի օգտին՝ հարցվածների 25,4 տոկոսը:*

*Հիշեցնենք, որ, ընտրությունների առաջին փուլում, որին մասնակցում էր 39 թեկնածու, Զելենսկին հավաքել էր ընտրողների ձայների 30,24, իսկ Պորոշենկոն՝ 15,95 տոկոսը:*

ՖՐԱՆՍԻԱ

## ՀՐԴԵՀ՝ ՓԱՐԻԶԻ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐՈՒՄ

*Ապրիլի 15-ին հրդեհ է բռնկվել Փարիզի Աստվածամոր տաճարում: Դրա հետեւանքով, փլվել է սայրաձողը, լուրջ վնասներ է ստացել կրող կառուցատարը: Հրդեհը մարել են մի քանի ժամ, կրակը հաջողվել է հանգցնել միայն ապրիլի 16-ի առավոտյան: Հրդեհի պատճառն առայժմ պարզված չէ: Տաճարի մի մասը փակված է փայտամածով:*

*Ամբողջ աշխարհից քաղաքական գործիչներն իրենց ցավակցությունն են հայտնում Ֆրանսիայի ղեկավարությանը: Սոցիալական ցանցերի օգտատերերը քննարկում են պատահարը եւ գրում, որ ապրիլի 15-ը դարձավ ոչ միայն երկրի, այլեւ աշխարհի պատմության վատթարագույն օրերից մեկը:*

*Հրդեհից տուժած տաճարի վերականգնման համար, անցկացվում է միջոցների հանգանակություն. խոստացված նվիրատվությունների գումարն արդեն հասել է 1 մլրդ եվրոյի:*

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ

## ԱՎՏՈԲՈՒՍԻ ՎԹԱՐ ՄԱԴԵՅՐԱ ԿՂԶՈՒՄ. ԿԱՆ ԶՈՀԵՐ

*Պորտուգալիայի Մադեյրա կղզու կառավարությունը եռօրյա սուգ է հայտարարել տուրիստական ավտոբուսի վթարից մեծ թվով մարդկանց զոհվելուց հետո:*

*Ճանապարհատրանսպորտային պատահարը Մադեյրայում տեղի է ունեցել ապրիլի 17-ին: Ըստ վերջին տվյալների,՝ վթարի հետեւանքով զոհվել է 29 մարդ: Զոհվածներից 17-ը կանայք են: Եվս 22 հոգի վիրավորվել են: Գերմանիայի ԱԳ նախարարությունը հայտնել է, որ ավտոբուսում եղել են գերմանացի զբոսաշրջիկներ: Ինչպես նշում են ԶԼՄ-ները, վարորդը կորցրել է կառավարումը, ավտոբուսը դուրս է եկել ճանապարհից ու ընկել տան վրա: Վթարի պատճառը դեռեւս չի պարզվել: Ըստ նախնական վարկածի, խափանվել է արգելակման համակարգը:*

## Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԿԻՊՐՈՍ

# ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՄԲ

*Ապրիլի 17-ին, երկօրյա պաշտոնական այցով, Վրաստան ժամանեց Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը:*



Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին պետական արարողությունների նստավայրում հանդիպել է Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսին: Դա Կիպրոսի Հանրապետության նախագահ Նիկոս Անաստասիադիսի՝ կնոջ՝ Անդրի Անաստասիադիսի հետ, առաջին այցն է Վրաստան:

Թբիլիսիի Հավլաբարի նախագահական նստավայրում, որն օրեր առաջ պետական արարողությունների պալատի գործառույթ ստացավ, կայացավ Կիպրոսի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունը: Արարողության ավարտից հետո, տեղի ունեցավ Սալոմե Զուրաբիշվիլու եւ Նիկոս Անաստասիադիսի առանձնազրույցը, որին հաջորդեց ընդլայնված ձեւաչափով հանդիպումը: Բանակցությունների ավարտից հետո, անցկացվեց երկու երկրների նախագահների համատեղ մամլո ասուլիսը:

Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսի Վրաստան այցի շրջանակներում, Վրաստանի եւ Կիպրոսի միջեւ ձեւակերպվեցին մի քանի համաձայնագրեր: Մասնավորապես, «գաղտնի լրատվության փոխանակման եւ երկկողմանի պաշտպանության» ու «առողջապահության պաշտպանության ոլորտում համագործակցության», ինչպես նաեւ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության համաձայնագրեր:

Բացի այդ, երկրների միջեւ բանակցություններ են տեղի ունենալու եւս մեկ փաստաթղթի ստորագրման նպատակով: Խոսքը վերաբերում է «երկու երկրների բարձրագույն կրթական հաստատություններում կրթության ձեռնհասության եւ հզորացման նպատակով բարձրագույն կրթության դասակարգման երկկողմ ակադեմիական ճանաչմանը»:

Երկօրյա այցի շրջանակներում, Կիպրոսի նախագահը հանդիպումներ ունեցավ նաեւ վարչապետ Մամուկա Բախտաձեի, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի հետ: Այցի շրջանակներում, անցկացվեց բիզնես-ֆորում, որտեղ քննարկեցին Վրաստանի եւ Կիպրոսի միջեւ տնտեսական հարաբերությունների հեռանկարները, ստորագրվեցին մի քանի պայմանագիր: Կիպրոսի նախագահը հանդիպում ունեցավ նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԾՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ված, որտեղ նշված է, որ արդարադատության Գերագույն խորհուրդը խորհրդարանի Գերագույն դատարանի նախագահի կամ Գերագույն դատարանի դատավորի պաշտոնի համար առաջադրում է թեկնածու, որը բավարարվում է Վրաստանի սահմանադրությամբ եւ այս օրենքով դատավորի համար սահմանված ընդհանուր որակավորման պահանջները եւ հավելյալ պայմաններից մեկը՝

գործող դատավոր է, նախկին դատավոր է, որի իրավասության դադարեցումից չի անցել 10 տարի, անձ է, որի մասնագիտական որակավորումը համապատասխանում է Գերագույն դատարանի դատավորի բարձր կարգավիճակին:

Դրա հետ մեկտեղ, նախագծում ասվում է, որ արդարադատության Գերագույն խորհուրդն իրավասու է թեկնածուին առաջադրել՝ առանց դատավորի որակավորման քննություն հանձնելու:

Ինչ վերաբերում է մեկ այլ ուղղման, խմբագրված տարբերակով, եթե Գերագույն դատարանի դատավորի թեկնածուն արդարադատության Գերագույն խորհրդի անդամ է, նա չի օգտվում թեկնածուներին գնահատելու եւ քվեարկելու իրավունքից գործընթացի որեւէ փուլում, ինչպես նաեւ իրավասու չէ, հարցով դիմել թեկնածուներին արդարադատության Գերագույն խորհրդի կողմից նրանց լսելու ժամանակ:

Կառավարող թիմի անդամների հայտարարությամբ, հաշվի են առնվելու դիտողությունների մեծ մասը, սակայն կան կետեր, որոնց շուրջ թիմում կա տարակարծություն, այդ թվում՝ եւ մրցույթի մասնակից ոչ դատավոր թեկնածուների համար որակավորման քննությունների չեղարկումն ու քվեարկությունը բաց ձեւով անցկացնելու հարցերը:

Ինչպես նաեւ նախնական հայտարարություններից պարզ է դառնում, որ կառավարող թիմը չի պատրաստվում հաշվի առնել այն կետը, ըստ որի, եվրոպացի փորձագետները կառավարող թիմին խորհուրդ են տալիս, որ դատավորների մի մասին ընտրի ապագա գումարման խորհրդարանը:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

# ԱՋԱՂԵԿ ՏԱՔՍԻՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՇԱՀԱԳՈՐԾՎԵԼ ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը

***- Աջաղեկ ավտոմեքենաների տաքսու վարորդներին հնարավորություն ենք տալիս «B անվանակարգում» շարունակել աշխատանքը մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը,- այս մասին հայտարարել է Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:***

Նրա խոսքով, նշված հարցի վերաբերյալ որոշումը ընդունվել է տաքսու վարորդների նախաձեռնողական խմբի անդամների հետ հանդիպումից հետո:

Նշենք, որ Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն մայրաքաղաքի կառավարության՝ մարտի 27-ի նիստին խոսել էր տաքսիների ընթացիկ բարեփոխման մասին: Քաղաքապետը նշեց, որ լինելու է արտոնագրի երկու ուղղություն: Նրա խոսքով, «A անվանակարգի» արտոնագիր ունեցող վարորդները պարտավորվում են ունենալ սպիտակ ավտոմեքենաներ: Դրա հետ մեկտեղ, «A անվանակարգի» արտոնագիր ունեցող տաքսու վարորդներին քաղաքապետարանը փոխանցելու է անվճար հատուկ ցուցանակներ: Ինչ վերաբերում է «B անվանակարգի» արտոնագիր ունեցող վարորդներին, նրանք չունեն ո'չ տաքսին ներկելու եւ ո'չ էլ ցուցանակի մոնտաժման պարտավորվածություն: Նրանք հնարավորություն ունեն գրանցվել «Տաքսիֆայ» կամ «Ուբեր» համակարգում եւ ծառայություն մատուցել բնակչությանը:



## ԵՐԿՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԸ՝ ՋՎԻԱԴ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ԱՆՈՒՆՈՎ

*Վրաստանի խորհրդարանի լիագումար նիստերի դահլիճը այսուհետ կկոչվի երկրի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի անունով: Այդ որոշումը միաձայն ընդունվել է բյուրոյի նիստում:*

*Հիշեցնենք՝ Վրաստանի անկախության վերականգնումը հռչակվել է 1991 թվականի ապրիլի 9-ին, խորհրդային բանակի կողմից Թբիլիսիի կենտրոնում ազատության համար փողոց դուրս եկած խաղաղ ցուցարարների հանդեպ իրականացված դաժան հաշվեհարդարից ուղիղ երկու տարի անց:*

## ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*Եվրոպական ներդրումային բանկը նախատեսում է ֆինանսավորել Վրաստանում գործող «Կրիստալ» միկրոֆինանսական կազմակերպությունը: Խոսքը 4,14 միլիոն եվրո վարկային գծի բացման մասին է:*

*Ֆինանսավորումը միտված է փոքր եւ միջին ձեռնարկությունների աջակցությանը: Հատկապես ընդգծվում են կանանց մասնակցությունը եւ շրջաններում գտնվող ձեռնարկությունները:*

*Եվրոպական ներդրումային բանկի ներգրավվածությամբ, Վրաստանում այս պահին դրությամբ իրականացվում են մի քանի խոշոր ենթակառուցվածքային նախագծեր: Բանկը նախատեսում է ֆինանսավորել նաեւ ավտոմայրուղու Ռիկոթիի հատվածը, ստորգետնյա գազապահեստը եւ «Նենսկրա-ՀԷԿ»-ը:*

## ԱՎԵԼԻ ՇԱՏ ԱՐՏԱՀԱՆՎՈՒՄ Է, ՔԱՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՒՄ

*Վրաստանի ազգային վիճակագրության տվյալների համաձայն, 2019 թվականի հունվար-մարտ ժամանակահատվածում վրացական ապրանքի արտահանումը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, 12,8 տոկոսով աճել է՝ կազմելով 826 մլն դոլար:*

*2019 թվականի սկզբից Վրաստանում ներկրումը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, 4,7 տոկոսով նվազել է եւ կազմել 2 մլրդ դոլար:*

*Երկրի արտաքին ապրանքաշրջանառությունը 2019 թվականի հունվար-մարտ ամիսներին կազմել է ավելի քան 2,8 մլրդ դոլար, ինչը 0,1 տոկոսով պակաս է 2018 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշից:*

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ՝ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ. ԱՌԳՐԱՎՎԵԼ ԵՆ... ՀՐԱԶԵՆ, ԴԱՆԱԿ...

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, 2018 թվականի սեպտեմբերի 17-ից 2019 թվականի սկիզբն ընկած ժամանակահատվածում, Վրաստանի հանրային դպրոցներից առգրավվել են 853 արգելված իրեր, ներառյալ՝ հրազեն, թմրանյութեր, էլեկտրաշոկեր եւ բռնցքազենք:***

Գերատեսչության տեղեկատվության համաձայն, 2019 թվականի փետրվարի 1-ից, Վրաստանի մասշտաբով, դպրոցներում իրականացվել են 1435 ոչ կոնտակտային մակերեսային ստուգումներ, որոնցից 905-ը՝ Թբիլիսիում , 152-ը՝ Քվեմո-Քարթլիում, 95-ը՝ Սամեգրելո-Զեմո Սվանեթիում, 86-ը՝ Իմերեթիում, 71-ը՝ Շիդա-Քարթլիում, 70-ը՝ Աջարիայում, 28-ը՝ Սամցխե-Ջավախեթիում, 12-ը՝ Մցխեթա-Մթիանեթիում, 10-ը՝ Կախեթիում, 6-ը՝ Գուրիայում:

Վերը նշված ժամանակահատվածում հանրային դպրոցներում հայտնաբերվել է մինչեւ 66 հազար խախտում, որից 64780-ը կարգապահական են: 853 դեպքում առգրավվել են արգելված առարկաներ: 252 դեպքով գրանցված խախտումները վերաբերել են դասաժամին բջջային հեռախոս օգտագործելուն, 7184-ը՝ դասից փախչելուն, 4504-ը՝ դասը խափանել կամ խափանելու փորձ անելուն, 42803-ը՝ ուշացմամբ դպրոց ներկայանալուն, 10037-ը՝ ուշացմամբ դասի ներկայանալուն:

«Հաշվետու ժամանակահատվածում դպրոցներից առգրավվել են 1 հրազեն, 56 դանակ, 13 սուր առարկա, 3 բութ առարկա, խաղաթղթերի 25 կապուկ եւ այլ ազարտային խաղերի միջոցներ, 3 պայթուցիկ կամ թունավոր նյութ, 26 բռնցքազենք (կաստետ): Բացի դրանից, արձանագրվել է ականջակալների օգտագործման 4 դեպք, 294 ծխախոտ եւ կրակայրիչ (լուցկի), 73 ճայթուկ, 80 էլեկտրոնային ծխախոտ, 1 էլեկտրաշոկեր (ներկրում), 33 թմրանյութերի օգտագործման առարկաներ, դպրոց ալկոհոլ ներկրելու 21, ըստ էության թմրանյութ ներկելու 20 փաստ»,- նշված է փաստաթղթում:



Նախարարության տեղեկատվությամբ, 2018 թվականի սեպտեմբերի 17-ից 2019 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում Վրաստանի հանրակրթական դպրոցներում 374 անգամ ոստիկանություն է կանչվել, դեռահասների միջեւ արձանագրվել է 2396 դիմակայություն:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ԱՊՐԻԼԻ 14-Ը ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐՆ Է

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՔԱՅԼԵՐԸ ՊԵՏՔ Է ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՆ ԷԼ ԿԱՏԱՐԵՆ. ԴՈՒՔ ԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՔԱՅԼԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր եկել են այստեղ: Գիտեմ, որ ոչ բոլորն են հասկանում վրացերեն կամ հասկանում են կիսով չափ, բայց կարեւորն այն է, որ բոլորդ եկել եք, շնորհակալ եմ դրա համար: Ես պատասխանատու եմ նրա համար, որ երկրում վրաց լեզուն իսկապես պետական լեզու դառնա, դառնա բոլորի լեզուն, քանի որ ես բոլորի նախագահն եմ, ես սահմանադրությամբ պատասխանատվություն եմ կրում լեզվի տարածման, հանրամատչելի դարձնելու եւ լեզվի ուսուցման համար,- նշեց նախագահը:

Նա խոսեց պետական լեզվի ուսուցման կարեւորության մասին:

- Պետությունն ուժեղ է այն ժամանակ, երբ նրա բոլոր քաղաքացիները ցանկանում են պետության լիիրավ անդամ լինել, երբ նրանք զգում են իրենց լիարժեք քաղաքացիներ,- ասաց Սալոմե Զուրաբիշվիլին:

Իր խոսքում, Սալոմե Զուրաբիշվիլին անդրադարձավ նաեւ երկքաղաքացիության թեմային՝ նշելով, որ երկքաղաքացիություն թույլ տալով, պետությունն ընդառաջ է գնացել բնակչությանը, եւ բնակչությունն իր կողմից պետք է քայլեր ձեռնարկի՝ անցնի լեզվի իմացության փոքրիկ քննություն:

- Ես շատ մեծ ցանկություն ունեմ, որ բոլորդ, ովքեր այստեղ եք, Ձեր երեխաները, դառնան Վրաստանի լիիրավ քաղաքացիներ, այդ իսկ պատճառով, ես բավականին շատ բան եմ արել նրա համար, որպեսզի երկքաղաքացիությունը հնարավոր լինի բոլորի համար, չլինի արգելված, ինչպես դա հին սահմանադրությամբ էր: Սահմանադրության այդ փոփոխությունն արդեն ուժի մեջ է մտել, եւ յուրաքանչյուր ոք իրավունք ունի վերադարձնել ու վերականգնել Վրաստանի քաղաքացիությունը,- ասաց Սալոմե Զուրաբիշվիլին:

- Բայց դրա համար հարկավոր է, որ քայլեր կատարվեն երկու կողմերից, որ երկրորդ կողմը, այսինքն՝ դուք, կատարեք այդ մեկ քայլը, ինչը նշանակում է, որ դուք ցանկանում եք լինել այս երկրի քաղաքացի, եւ դա այն մակարդակի լեզվի իմացությունն է, որ կարողանաք հաղթահարել այս փոքրիկ քննությունը, որը քաղաքացիության վերականգնման ընթացակարգում է: Դա սիմվոլիկ է համարվում, բայց միեւնույն ժամանակ շատ բան է նշանակում: Դա նշանակում է, որ պետությունը ցանկանում է, որ դուք դառնաք երկրի լիիրավ քաղաքացիներ,- նշեց նախագահը:

Ախալքալաքիում Սալոմե Զուրաբիշվիլին այցելեց տեղի Սուրբ Խաչ եկեղեցի: Հատկանշական է, որ այս այցը նախապես ծրագրված չէր, նախագահը որոշեց այցելել եկեղեցի, երբ իմացավ, որ Հայ Առաքելական եկեղեցին այդ օրը նշում է Ծաղկազարդը:

Այնուհետեւ, Սալոմե Զուրաբիշվիլին ուղեւորվեց դեպի Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոկա գյուղ:

## ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ «ԵՍ ԳՐՈՒՄ ԵՄ ՎՐԱՑԵՐԵՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

### ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՄԱՆՈՒՇԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՆԱՍՏԱՍԻԱ ՄԻՆԱՍՈՎԱՆ

*Ապրիլի 14-ին, Վրաց լեզվի օրվա առիթով, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին պարգեւատրեց «Ես գրում եմ վրացերեն» մրցույթի հաղթողներին:*



Մրցույթը հայտարարվել էր մի քանի շաբաթ առաջ ոչ վրացալեզու դպրոցների 9-րդ դասարանի աշակերտների համար: Մրցույթի նպատակն էր պետական լեզվի տարածումը, էթնիկ փոքրամասնությունների շրջանում վրացերենի նկատմամբ հետաքրքրության ավելացումը:

Թբիլիսիի պետական համալսարանում տեղի ունեցած միջոցառման ընթացքում, պետնախարարը շնորհավորեց ներկաներին եւ խոսեց լեզվի կարեւորության ու այն տարածելու եւ պահպանման հարցում երիտասարդության մեծ դերի մասին:

Ինչ վերաբերում է մրցույթին, այն տեղի է ունեցել երեք փուլով: Եզրափակիչ փուլում մասնակիցները գրող Բեքա Քուրխուլու ստեղծագործությունից մի հատված գրել են թելադրություն: Հաղթողները երեքն են՝ Այտան Մեխտիեւա, Մանուշակ Վարդանյան եւ Անաստասիա Մինասովա: Նրանք պարգեւատրվեցին պատվոգրերով եւ նվերներով:

Մրցույթն անցկացվել է Թբիլիսիի պետական համալսարանի եւ Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

## «ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐԸ»՝ ԹԲԻԼԻՍԻԻ ԹԻՎ 104 ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

*Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի բեմին այդ օրը հնչեցին վրաց գրականության մեծերի՝ Մուխրան Մաճավարիանու, Մուրման Լեբանիձեի, Շոթա Նիշնիանիձեի, Իոսեբ Նոնեշվիլու եւ այլ պոետների ստեղծագործությունները: Հայրենի Վրաստանին, վրաց ժողովրդին ու նրա լեզվին նվիրված բանաստեղծական գողտրիկ նմուշները հնչեցին հոյակապ վրացերենով:*

Այսպես նշեց կրթօջախը «Վրաց լեզվի օրվան» նվիրված ավանդական տոնը, որը, 9-րդ դասարանի աշակերտների մասնակցությամբ, կազմակերպել էր դպրոցի վրաց լեզվի եւ գրականության ուսուցչուհի, «Քաղաքի լավագույն ուսուցիչ» կոչման ասպետ Լիա Նացվլիշվիլին:



Քաղաքի կրթաշխարհում իր լավագույն արդյունքներով վաստակաշատ ուսուցչուհին՝ ընդամենը հինգ տարի է, ինչ աշխատում է թիվ 104 հանրային դպրոցում: Այդ կարճ ժամանակահատվածում նա կարողացել է մերվել հայ կոլեգաներին, վաստակել դպրոցի մանկավարժների ու աշակերտների խորին հարգանքն ու սերը:

Երկա՜ր տարիներ վրաց լեզու եւ գրականություն է դասավանդել Թբիլիսիի թիվ 80 դպրոցում, այդ տարիներին ուսուցչական արդյունավետ գործունեության համար արժանացել Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության տարբեր պատվոգրերի ու գնահատականների:

- Երբ հայ աշակերտներիս շուրթերից հնչում է վարժ ու գեղեցիկ վրացերենը, ես ինձ ամենաերջանիկն եմ համարում,- մեզ հետ զրույցում ասաց Լիա Նացվլիշվիլին:

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը առաջարկեց մասսայականացնել նման միջոցառումները:

- Մեր հայկական դպրոցի աշակերտների այսօրվա միջոցառումը յուրահատուկ ապացույց է վրաց հասարակությանը, որ այսօրվա Թբիլիսիի հայկական դպրոցների սաները վրացերենին տիրապետում են այնպես, ինչպես վրացիները:

Խրախուսանքով եւ բարի մաղթանքներով էր հագեցած նաեւ դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանի, վրաց լեզվի ուսուցչուհի Լալի Ջավախիձեի, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանի՝ ցերեկույթի կազմակերպիչ ուսուցչին ու նրա սաներին հղված խոսքերը:

*ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

## «ՀԱՅԵՐԵՆԸ ՔՈՆՆ Է, ՀԻՄԱ ՍՈՎՈՐԻՐ ՎՐԱՑԵՐԵՆ, ՈՐ ՔՈ ՏԵՂԸ ԳՏՆԵՍ ԿՅԱՆՔՈՒՄ»



*Ինչպես գիտենք, 2010 թվականից Վրաստանի բուհերում գործում է «1+4» ծրագիրը, որը երկրի ազգային փոքրամասնություններին տալիս է վրաստանյան բուհերում սովորելու հնարավորություն: Դրա արդյունքում, 2010թ. վրացական բուհեր ընդունված ընդամենը 247 այլազգի ուսանողների թիվը 2018-ին հասել է 1231-ի: Ընդ որում, ազգային ցանկացած փոքրամասնության դեպքում, ընդունվողների լավագույն հարյուրյակը սովորում է անվճար:*

Վրաց լեզվի նախապատրաստական ծրագրով մեկ տարի վրացերենը յուրացնելուց հետո՝ երկրի հայ, ռուս, ադրբեջանցի, օս, աբխազ եւ այլ ազգության երիտասարդը դառնում է տվյալ բուհի ցանկացած ֆակուլտետի ուսանող: Ասել է՝ բուհն ավարտելուց հետո, նա նաեւ վրացերենի տիրապետման առումով լիարժեք մասնագետ դարձած, աշխատում է համապատասխան ասպարեզում: Ցավոք, փաստերը ոչ միշտ են արդարացնում սպասումները. ոչ միշտ է բուհի շրջանավարտը անհրաժեշտ չափով տիրապետում լեզվին, ինչը, բնականաբար, ստեղծում է որոշակի խնդիրներ՝ առանձնապես հումանիտար ու հանրության հետ շփումներ պահանջող աշխատանքներում: Փորձվո՞ւմ է արդյոք հաղթահարել այդ խնդիրը...

Այսօրվա մեր զրուցակիցն է Ախալքալաքիի շրջանի Էխտիլա հայաբնակ գյուղի բնակիչ, նույն գյուղի դպրոցի շրջանավարտ, ներկայումս Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Նորիկ Ղարագեբակյանը:

***- Ի՞նչը դրդեց քեզ իրավաբան դառնալ՝ գուցե ընտանիքի հետ կապված կյանքային որեւէ խնդրահարույց դիպվա՞ծ...***

- Ո'չ, արտաքին դրդապատճառներ չեն եղել: Մանկուց եմ մեջս զգացել կյանքում արդարը հաստատելու ներքին մի հակում, որը հասուն տարիքում դարձավ գիտակցված ցանկություն ու հաստատուն որոշում՝ դառնալ արդարամիտ իրավաբան:

***- Նորիկ, դու ստացել ես հայկական միջնակարգ կրթություն, այսինքն՝ կարող էիր Հայաստանում շարունակել բարձրագույն կրթությունդ, ինչո՞ւ որոշեցիր ընդունվել վրացական բուհ, չէ՞ որ դա բերելու էր որոշակի դժվարություններ:***

- Դա, նախեւառաջ, մեր ընտանիքի ու առանձնապես հայրիկիս ցանկությունն է եղել: Նա ասաց. «Տղաս, մենք այստեղ պետք է ապրենք, դրա համար դու պետք է հարմարվես կյանքին: Հայերենը քոնն է, այն դու գիտես, հիմա սովորիր վրացերեն, որ քո տեղը գտնես վրաց հասարակության մեջ...»:

***- Եվ դու դարձար Իվանե Ջավախիշվիլու համալսարանի զրո կուրսի ուսանող: Այդ մեկ տարում քեզ՝ շրջանից եկածիդ, հաջողվե՞ց արդյոք անհրաժեշտ չափով տիրապետել վրացերենին...***

- Ինձ համար դասախոսությունները հասկանալի էին, հիմնականում դժվարություններ ունեցա բանավոր խոսքի ուղղությամբ մտքերս ցանկացածի պես արտահայտելու առումով: Սկզբում ասելիքս հայերեն էի գրում, ապա՝ թարգմանում: Դա հեշտ էր կատարվում: Բայց դա եւս պետք էր հաղթահարել, եւ այդ ճանապարհին շատ էր օգնում վրացերեն ընթերցանությունը, հեռուստատեսությունը, իհարկե, նաեւ՝ բանավոր շփումները: Ինձ շատ օգնեց նաեւ իմ՝ Թբիլիսիի Թարգմանչական բյուրոներից մեկում թարգմանիչ աշխատելը:

***- Նորիկ, դու ընդամենը մի քանի ամսում կավարտես ուսումդ, ապագայի ի՞նչ ծրագրեր ունես:***

- Մտադիր եմ մագիստրատուրա ընդունվել եւ, եթե հնարավոր է, մագիստրատուրայում սովորելիս, աշխատել:

***- Ուրեմն, շուտով, քո մասնագիտության պահանջով, դու շփվելու ես հանրության հետ: Նման շփման համար դու քեզ պատրաստ զգո՞ւմ ես: Չէ՞ որ շփվել նշանակում է վարժ խոսել ու կարողանալ ցանկացած ամբիոնից վստահ կերպով մտքեր արտահայտել:***

- Նույնիսկ ազգությամբ վրացի շրջանավարտը, աշխատանքային առաջին քայլերն անելիս, մտավախություն կունենա, ուր մնաց՝ ես... Բայց, մի բան հաստատ գիտեմ, որ սիրում եմ իմ մասնագիտությունը, եւ այդ սերը ինձ կօգնի լրացնել թերին, լեզվի յուրացման հարցում, ինքս ինձ վրա աշխատելով, հաղթահարել ծառացած խնդիրները: Կյանքը պայքար է, իսկ ես պատրաստ եմ այդ մարտահրավերին եւ հուսով եմ, որ ինքս ինձ վրա աշխատելու արդյունքում, ամեն ինչ իր տեղը կընկնի:

***- Քեզ լսելիս՝ ուզում ենք հավատալ, որ իրոք չես զլանա հաղթահարել պետական լեզվի տիրապետման հարցում եղած թերին եւ հավատալ, որ քեզ նման են մտածում նաեւ այսօր վրացական բուհերում սովորող բոլոր հայ ուսանողները... Իսկ քեզ շնորհակալություն անկեղծ զրույցի համար, Թող կյանքի լայն պողոտայում ճանապարհդ միշտ կանաչ լինի, ամենայն բարին քեզ եւ բոլոր մյուս ուսանողներին:***

*Զրուցեց ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*